# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Խմբագրութիւնս ստացաւ ազգային մի նոր հանդիսի յայտարարութիւնն՝ որ է՝ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ, կիսամեայ պատկերազարդ։ Հանդէսը լոյս կը տեսնէ ի Տփղիս, և որուն ընդհանուր Նպատակն և Ծրագիրն են։

## ՆՊԱՏԱԿ

ա. Հաւաքել եւ մշակել Հայ ազգագրութեան վերաբերեալ նիւթեր.

բ. Ծանօթացնել ընթերցողներին ընդհանուր ազգագրութեան եւ առաջնորդել նիւթեր հաւաքելու։

## ԾՐԱԳԻՐ

ա. Տեղագրութիւն Հայաստանի եւ Հայ գաղութների։

բ. Պատմական եւ մատենագրական յօդուածներ Հայոց եւ նրանց հետ շփուող ազգերի մասին։*

գ. Վիճակագրութիւն Հայոց եւ համեմատութիւններ։

դ. Մարդաբանական հետազօտութիւններ եւ համեմատութիւններ։

ե. Հնախօսութիւն Հայաստանի եւ համեմատութիւններ։

զ. Ազգագրութիւն եւ ցեղագրութիւն։

է. Հայոց բանաւոր գրականութիւն. (ժողովրդական ձայնագրուած եղանակներ.) ա. նիւթ. բ. ուսումնասիրութիւն։

ը. Հայ դատաստանների ուսումնասիրութիւն. բառ եւ ոճ։

թ. Ազգային իրաւաբանական սովորութիւններ։

ժ. Ծրագիրներ եւ եղանակ նիւթեր հաւաքելու։

ժա. Գրախօսութիւն ա. Հայերէն եւ օտար լեզուներով Հայ ազգագրութեան եւ բ. ընդհանուր ազգագրութեան վերաբերեալ գրքերի եւ յօդուածների։

ժբ. Այլեւայլք։

ժգ. Յայտարարութիւններ։

Ներկայ 1895 թ. հրատարակուելու է միայն մի գիրք, մեծադիր առնուազը 400 երեսից բաղկացած։

Բաժանորդագինն է 5 ֆրանկ կամ 2 րուբլի կանխիկ։

Դիմել. Rédaction de la Revue » Azgagrakan handess, Schouscha (Caucase). կամ *Въ Редакцію журнала «Азгаграканъ андесъ Шуша»*.

Բաժանորդագինը կարելի է ուղարկել և Վիեննա, Գեր. Մխիթարեանների հասցէով.

Հրատարակիչ Եր. Լալայեան

Հանդիսիս գրած նպատակին ծրագրէն դատելով, հեշտին է նկատել՝ որ շատ հետաքրքրական նիւթեր պիտի մատակարարէ ազգային բանասիրաց. բայց որովհետեւ դեռ եւս մեր ձեռքը չէ հասած առաջին թիւն, ուստի մեր կողմանէ առ այժմ առանց որ և է նկատողութիւն ընելու կը մաղթենք լիասիրտ՝ որ մեծապատիւ հրատարակչին Պր. Եր. Լալայեանցի ծրագիրն անթերի իւր նպատակին հասնին։

* * *

Կոմիտաս Ա. Ոսկեան — ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱԳԻՐՔ ՀԱՅԵՐԷՆ — ԳԱՂՂԻԵՐԷՆ. Նոր

---

* Ծանօթ. — Այս եւ վերոյիշեալ մասն ազգագրութեան վերաբերեալ ծրագրով եւ ծաւալով։ Ասենք. բոլորին պարզելու համար, որ «Ազգագրական Հանդէս» իւր կոչման համեմատ բոլորովին հեռու է մնալու քաղաքական եւ կուսակցական հարցերից։

digitised by A.R.A.R.@

տպգր. (երկրորդ), ուղղեալ և յաւելեալ. տպ. ի Կ. Պոլիս ի տպարանի Յ. Մատթէոսեան, թիւ 27, Ֆինճանճըլար Եօգուշու։

Սոյն երկասիրութիւնս, որ խնամով աշխատուած և պատրաստուած ընտիր գործ մ'է, իր նախորդներէն աւելի ունեցած բաւական կատարելութեամբն և ճոխութեամբն, իրաւամբ կրնայ պատուաբեր գիրք մը գրաւել, մինչև ցայժմ հրատարակուած սոյն տեսակ բառգրոց դասուն մէջ։

Թէպէտև սա բոլորովին ճշգրութիւններէ, ինչպէս հեղինակն այլ կը խոստովանի, զուրկ չէ, սակայն կը պարտաւորինք ըսել՝ թէ թերութիւնք ըսուածն այնպիսի բաներ չեն, որ հեղինակին յարգը և գրոց վարկը նուաստացնեն, ուստի յանկեղծ սրտէ կը մաղթենք որ այս ընտիր գործը ամէն ուսանողաց ձեռքը տրուի իբրև կարևոր և ընտիր գործի մը, որով հեղինակին անխոնջ վաստակը պսակուած կը լինի։

---


Մամուլի տակից լոյս տեսաւ

«ԹԱՏՐՈՆ». — Գրական և թատեր. պատկերազարդ հանդէսի 1895թուի Ա Nը։

«Թատրոնի.» — Բ Nը. լոյս կը տեսնէ Նոյեմբերին. տարեկան բաժանորդագինն է 3ր 30կ. Արտասահման 10 ֆրանք։

Հրատարակիչ Ալ. Թարխանեան։ Դիմել հետևեալ հասցէով.

ALEXANDRE TARKHANIAN

TIFLIS

*(Caucase Russie)*


## Ա. Զ. Դ.

Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք մեծապատիւ բժիշկ Վահրամ Թորգոմեանին որ ազնուաբար նուիրեց մեր Մատենադարանին հին, և հազուագիւտ բժշկարան Բեստէն Միքայէլի. — կրթութիւն բժշկական արուեստի, 5 հատ. Բեստէն պարոն Միքայէլի տէր պետրոսեան կոստանդնուպոլսեցւոյ՝ ի լեզու աշխարհաբառ. տպ. յՕրթագիւղ 1837?։

* * *

ԳԱՌՆԻԿ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ. — Յանձնակատար. — Ամեն տեսակ գրեանց եւ տպագրական արտադրութեանց զանազան պատկերներու, եւն եւն։

Գործակալ. — «Արաքս», «Հայք», «Հանդէս ամսօրեայ» «Բազմավէպ» «Հորիզոն», «Հանդէս ազգագրական» եւ այլ ամսօրեայ եւ պարբերական հրատարակութեանց։

digitised by A.R.A.R.@

Ներկայացուցիչ. — *Հրատարակչական ընկ. հայոց Թիֆլիզի եւ այլ մի քանի ծանօթ գրատանց եւ տպարանաց :*

Հայթայթիչ. — *Եւրոպական լեզուաց ամեն տեսակ գրեանց եւ հրատարակութեանց : Հաստատեալ 1890 ի Ռուսչուք :*

*Հասցէ*

K. Deukmédjian

ROUSTCHOUK

*(Bulgarie)*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


| | |
|---|---|
| *Հին հաւատք Հայոց* | 433 |
| *Տարեգիրք Հայոց Իլախաց և Օլախաց երկրի* | 442 |
| *Հայկական տպագրութեան պատմութիւն՝ սկզբնաւորութենէն մինչ առ մեզ* | 445 |
| *Ուղևորութիւն Շանտրի յարևելս* | 451 |
| *Դաւիթ և Հրեշտակ հովուերգութիւն* | 456 |
| *Մեղուաբուծութիւն* | 459 |
| ՎԵՍՏԵԱՆ ԿՈՅՍ. — *Պատմական վէպ եկեղեցւոյ առաջին դարու* | 463 |
| ՀԱՆԴԷՍ ԹԱՏԵՐԱԿԱՆ. — *Խաղամոլ* | 467 |
| *Խմբագրատան մի մէջ* | 473 |
| *Ազգային մի ի Մասսուա և երիտրեան ծխագլանիկ* | 471 |
| *Ապահարզան* | 475 |
| *Նոր հրատարակութիւնք* | 478 |
| *Ազդ* | 479 |


## SOMMAIRE


| | |
|---|---|
| L'ancienne foi des Arméniens ou la religion arménienne | 433 |
| Les Annales des Arméniens de la Pologne et de la Valachie | 442 |
| L'histoire de l'imprimerie arménienne, du commencement jusq' à nos jours | 445 |
| 'A travers l'Armenie russe | 451 |
| David et un Auge (Églogue) | 456 |
| Notion d'apiculture | 459 |
| LA VESTALE. — Récit historique du premier siècle de l'Église | 463 |
| Genre dramatique. — *Le joueur* | 467 |
| Un arménien à Massaua et des cigarettes érythreénnes | 873 |
| Dans un bureau de rédaction | 471 |
| Le divorce | 475 |
| Nouvelles publications | 478 |
| Avis | 479 |


digitised by A.R.A.R.@